



Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ տնտեսագիտության տնտեսագիտության մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

ԲՈՒՀԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ.

ԻՆՉ ԱՆԵԼ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՆԵԼ

Հիմնաբառեր.

բարձրագույն կրթություն, բուհեր, եկամուտների աղբյուրներ, բյուջե, բազմազանեցում

Մեր օրերում, երբ արտադրության հիմնական գործոնը գիտելիքն է, իսկ գիտական արտադրանքն ամենաեկամտաբերն ու, միաժամանակ, ամենաարագ հնացողը, բարձրագույն կրթության ոլորտի դերը չափազանց դժվար է գերազնահատել: Ակնհայտ է, որ բարձրագույն կրթության կենսունակության ապահովման հիմնական գործոններից մեկը ֆինանսավորումն է: Այս հոդվածում նախ՝ կդիտարկվեն բարձրագույն կրթության ֆինանսավորման աղբյուրները, դրանց բազմազանեցման թեր և դեմ կողմերը, ինչպես նաև անդրադարձ կկատարվի բուհերի բյուջեների ձևավորման սկզբունքներին:

Բուհերը մշտապես փորձում են բազմազանեցնել իրենց եկամուտների աղբյուրները ֆինանսական կայունության ապահովման նպատակով: ԵՄ հիմնադիր հայրերից մեկը՝ Ժան Մոնեն, պնդում էր, որ մարդիկ ընդունում են փոփոխությունները, երբ առաջանում է անհրաժեշտություն և գիտակցում են այդ անհրաժեշտությունը, երբ վրա է հասնում ճգնաժամը¹: Ընդամին, կազմակերպությունների վարքագիծը մեկնաբանող «ռեսուրսից կախյալ» տեսության (Resource dependency theory) համաձայն՝ բուհերն առավել հակված են բազմազանեցնել իրենց եկամուտների աղբյուրները, երբ վերջիններս հաճախակի փոխվում են՝ բուհերին կանգնեցնելով մարտահրավերների առջև: Տեսության հեղինակները պնդում են, որ եկամուտների աղբյուրների բազմազանեցմամբ բուհերը ձգտում են նվազեցնել արտաքին միջավայրի ազդեցությունն իրենց գործունեության

¹ ԵՄ հանձնաժողով, ԵՄ հանձնաժողովի նախագահ Բարոսոյի ելույթը ԵՄ ներկայացուցչությունում, սեպտեմբերի 4, 2012 թ., տես https://europa.eu/rapid/press-release_SPEECH-12-585_en.htm?locale=en

վրա²: Ի թիվս բազմաթիվ դեպքերի, սույն տեսությունը ապացուցվել է մալայզիական բուհերի օրինակով, երբ կառավարության կողմից ֆինանսավորման կրճատումը հանգեցրեց բուհերի եկամուտների աղբյուրների քանակական աճին³:

Բուհերի ֆինանսավորման աղբյուրները, ընդհանուր առմամբ, բոլորին են հայտնի: Բուհերը «սնվում» են կառավարության հատկացումներով կամ, որ նույնն է, հարկատուների վճարած հարկերով, ուսանողների վճարած ուսման վարձերով և այլ աղբյուրներով: «Եկամուտների բազմազանեցում» ասելով հասկանում ենք «այլ աղբյուրների» տակ դասակարգվող եկամուտների քանակական աճը: Այդպիսի աղբյուրների թվին են պատկանում հետազոտությունների առևտրայնացումը, խորհրդատվությունները, տարածքների վարձակալությունը, բուհերի կողմից ձեռնարկատիրական գործունեության ծավալումը, ներառյալ՝ տարատեսակ ֆինանսական գործիքներում կատարվող ներդրումները, ենթակա կազմակերպություններից (ստորաբաժանումներից) ստացվող շահույթը, տարատեսակ նվիրատվություններն ու դրամահավաքները, շրջանավարտների հետ բարեգործական ճաշկերույթներից հավաքագրված գումարները, իսկ, օրինակ, մասնագիտացված բուհերի պարագայում՝ հիվանդանոցային ծառայություններից, շենք-շինությունների նախագծումից ստացվող գումարները և այլն: Միկրոտնտեսագիտությունից հայտնի և շուկայի մենաշնորհացման աստիճանը գնահատելու համար օգտագործվող Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կիրառելի է նաև բուհերի եկամուտների կենտրոնացվածությունը հաշվարկելիս.

$CH = (E_1/U)^2 + (E_2/U)^2 + \dots + (E_n/U)^2$, (1)
որտեղ՝ E -ն եկամտի աղբյուրն է, իսկ U -ն՝ բուհի ամբողջական եկամուտը: Ցուցանիշը հաշվարկվում է 0-ից մինչև 1

միջակայքում, և որքան բարձր է այն, այնքան բարձր է եկամուտների կենտրոնացվածության աստիճանը կամ, այլ կերպ ասած, կախվածությունը մեկ աղբյուրից: 2016 թ. իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ եկամուտների բազմազանեցման բարձր մակարդակը դրական է ֆինանսական կայունության, մինչդեռ կենտրոնացվածության բարձր մակարդակը՝ ֆինանսական կարողությունների (financial capacity) ձևավորման տեսանկյունից⁴: Այժմ տեսնենք, թե ինչ թեր և դեմ կողմեր ունի բուհերի եկամուտների բազմազանեցումը.

1. Չակը և Տուկմանը, ուսումնասիրելով շահույթաչեղտապնդող 100.000 ընկերությունների ցուցանիշները, եկել են այն համոզման, որ եկամուտների աղբյուրների քանակը և կազմակերպության ակտիվներն ունեն միևնույն վեկտորական մեծությունը, իսկ Թրուսելի հետազոտությունը ցույց է տվել, որ եկամուտների աղբյուրների բազմազանեցման բարձր մակարդակը նվազեցրել է առաջիկա երեք տարում ակտիվների 20 և ավելի տոկոսով կրճատումը⁵:
2. Դե Սիլվայի հետազոտությունից (ավստրալիական բուհերի օրինակով) պարզ է դառնում, որ եկամուտների աղբյուրների բազմազանեցման, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտություն է առաջանում էականորեն փոխելու բուհերի ներքին կառուցվածքը՝ վերջինս դարձնելով առավել ճկուն և արդյունավետ⁶:

Սակայն, բուհերի եկամուտների բազմազանեցումը հղի է նաև որոշակի ռիսկերով.

1. Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ, ձգտելով եկամուտների աղբյուրների առավել լայն բազմազանեցման, բուհերը հաճախ շեղվում են իրենց

² Nik Ahmad, Nik Nazli, Siti Alawiah Siraj, and Suhaiza Ismail. "Revenue diversification in public higher learning institutions: an exploratory Malaysian study." *Journal of Applied Research in Higher Education*, 2019, p. 5.

³ Նույն տեղում:

⁴ Chikoto, Grace L., Qianhua Ling, and Daniel Gordon Neely. "The adoption and use of the Hirschman-Herfindahl Index in non-profit research: Does revenue diversification measurement matter?." *Voluntas: International Journal of Voluntary and Nonprofit Organizations* 27, no. 3 (2016): 1425-1447.

⁵ Ահմադ և այլք, էջ 3:

⁶ Նույն տեղում, էջ 5:

հիմնական նպատակից՝ առևտրայնացնելով հոգևորը և ուշադրության զգալի մասը բևեռելով ձեռնարկատիրական գործունեության վրա:

- Եկամուտների աղբյուրների բազմազանեցման ձգտումը կարող է իր կողմնակի ազդեցությունն ունենալ նաև ակադեմիական բարեվարքության վրա: Բուհերին պատվիրվող հետազոտությունները, եզրակացությունները հարմարեցվում են դոնորների նախասիրություններին, ինչն էականորեն խաթալում է ակադեմիական ազնվության և բարեվարքության հիմքերը:

Բուհերի ֆինանսավորման համաշխարհային միտումները ցույց են տալիս, որ պետական ֆինանսավորումը հետզհետե իր տեղը զիջում է մասնավոր աղբյուրներից ստացվող ֆինանսավորմանը: ՏՀՀԿ երկրներում, օրինակ, 1995-2012 թթ. բուհերի ֆինանսավորումը նվազել է 10 տոկոսային կետով⁷, թեև բարձրագույն կրթությանն ուղղվող պետական միջոցներն աճել են բացարձակ թվերով: Միաժամանակ, այստեղ մեկ ուսանողի հաշվով պետական հատկացումները միջինում ավելացել են 700 ԱՄՆ դոլարով (ոչ ՏՀՀԿ երկրներում՝ 1300)⁸: Պետությունները բուհերին աջակցում են ուղղակիորեն կամ

միջնորդավորված՝ ուսանողների միջոցով: Ուսանողների միջոցով աջակցությունը լինում է տարբեր տեսակի՝ պետական ուսանողական վարկեր, ուսանողների ծնողների համար՝ որոշակի հարկային արտոնություններ, կարիքի կամ առաջադիմության վրա հիմնված կրթաթոշակներ և այլն: Միջնորդավորված աջակցությունը նպաստում է բուհական ծրագրի արագ (ժամանակին) ավարտին, քանի որ ուսանողները ստիպված չեն լինում աշխատել ուսման վարձ վճարելու նպատակով (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ն արտացոլում է ՏՀՀԿ երկրներում գործող վարձավճարները, ինչպես նաև այն շահառուների շրջանակը, որ կարող է օգտվել պետական աջակցության ծրագրերից: Հյուսիսային Եվրոպայի երկրներում, օրինակ, վարձավճարները գրեթե զրոյական են, ուստի հավելյալ պետական օժանդակության անհրաժեշտություն չկա: Մինչդեռ, առավել «առատաձեռն» երկրները տեղակայված են գծապատկերի վերին աջ հատվածում: Նորվեգիայում, օրինակ, ուսանողների 75 տոկոսը այս կամ այն կերպ օգտվում է պետական աջակցությունից, մինչդեռ Ավստրիայում այդ ցուցանիշը 20 տոկոսից էլ պակաս է⁹:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Վարձավճարների և ուսանողներին տրվող աջակցության համակցումը ՏՀՀԿ երկրներում⁹

Շահառուների լայն շրջանակ	
Դանիա, Ֆինլանդիա, Իսլանդիա, Նորվեգիա, Շվեդիա	Ավստրալիա, Կանադա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Անգլիա, ԱՄՆ
Ցածր վարձավճարներ Ավստրիա, Բելգիա, Չեխիա, Ֆրանսիա, Իտալիա, Իռլանդիա, Լեհաստան, Պորտուգալիա, Իսպանիա	Բարձր վարձավճարներ Ճապոնիա, Կորեա
Շահառուների նեղ շրջանակ	

⁷ Jongbloed, Ben, and Hans Vossensteyn. "University funding and student funding: international comparisons." Oxford Review of Economic Policy 32, no. 4 (2016), p. 578.

⁸ Նույն տեղում, էջ 579:

⁹ Նույն տեղում, էջ 582:

Պետական ուղղակի (չմիջնորդավորված) ֆինանսավորումը լինում է երկու տեսակի՝ ըստ մուտքային գործոնների և ըստ արդյունքի: Ըստ մուտքային գործոնների ֆինանսավորման օրինակ է ուսանողների թվին համապատասխան ֆինանսավորումը: Սակայն, երբ ֆինանսավորումը կախված է որոշակի վերջնարդյունքից, ապա ֆինանսավորման չափն ըստ տարիների տարբերվում է: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պետական անուղղակի ֆինանսավորումը կախված է հետևյալ վերջնարդյունքներից.

1. բակալավրի և մագիստրոսական ծրագրերի քանակ (Ավստրիա, Դանիա, Ֆինլանդիա, Նիդեռլանդներ, Գերմանիա, ԱՄՆ),
2. ուսանողների վաստակած ակադեմիական կրեդիտներ (Ավստրիա, Դանիա, Ֆինլանդիա),
3. խոցելի խմբերին պատկանող ուսանողների քանակ (Ավստրալիա, Իռլանդիա, Գերմանիա, ԱՄՆ),
4. գիտական աստիճան ունեցող դասախոսների քանակ (Ավստրալիա, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Նիդեռլանդներ),
5. գիտական և գիտահետազոտական արդյունքներ, ազդեցության գործակիցներ (Ավստրալիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունկոնգ, Իռլանդիա, Շոտլանդիա)¹⁰:

Թվում է՝ լրացուցիչ միջոցներ ներգրավելու ցանկությամբ պայմանավորված, բուհերը կարող են հաշտվողական, համաձայնողական վարքագիծ դրսևորել՝ մեծացնելով, օրինակ, մագիստրոսական ծրագրերի թիվը: Սակայն, պետության համար դաշտը վերահսկելի է, քանի որ բուհերի առջև դրվում են հստակ չափորոշիչներ: Պետությունները խուսափում են ֆինանսավորումը շաղկապել այնպիսի ցուցանիշների հետ, ինչպիսիք են, օրինակ, շրջանավարտների՝ աշխատանքի աշխատաշուկա մուտք գործելու դյուրինությունը կամ կապը շրջանավարտների ստացած գիտելիքի և զբաղեցրած պաշտոնների միջև, քանի որ այդպիսի ցուցանիշները

ճշգրիտ և օբյեկտիվորեն չափելը մեծ դժվարությունների հետ է կապված: Հավելենք, որ զարգացած երկրները հետզհետե անցում են կատարում մուտքային տվյալների հիման վրա ֆինանսավորումից դեպի ելքային տվյալների հիման վրա ֆինանսավորում:

ՀՀ-ում նույնպես բուհերի ֆինանսավորման աղբյուրները բաժանվում են երեք մեծ խմբերի՝ պետական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցումներ, ուսանողների վճարներից գոյացած և այլ միջոցներ: Տարբերությունն այն է, որ «այլ»-ի ն ծավալն է ավելի փոքր, և որպես «այլ» դասակարգված եկամտի աղբյուրների քանակն է առավել նվազ: Ուստի կարևոր է ավելացնել ոչ միայն ֆինանսավորման աղբյուրների քանակը, այլև ոչ ավանդական աղբյուրներից ստացվող միջոցների տեսակարար կշիռը: Այս առումով, հետաքրքրական է, օրինակ, Կանադայի փորձը, որտեղ մի շարք բուհեր անցում են կատարել ծրագրային բյուջետավորման: Ծրագրային բյուջետավորումը, իր հերթին լինում է երկու տեսակի՝ ըստ գործողությունների և պատասխանատվության: Առաջինի պարագայում, ինչպես ինքնին հուշում է եզրույթը, ֆինանսավորումը տրվում է թիրախային՝ որոշակի ծրագրի իրագործման համար: Մինչդեռ, ըստ պատասխանատվության բյուջետավորումը բաղկացած է հետևյալ երեք տարրից.

1. եկամուտների ապակենտրոնացում,
2. խթաններ,
3. ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքների համատեղ ֆինանսավորում¹²:

Առաջին և երրորդ տարրերը վերցված են միջազգային, մասնավորապես՝ կանադական բուհերի փորձից, իսկ երկրորդ տարրը մեր լրացումն է: Այս մոդելը հաջողությամբ կիրառվել է Տորոնտոյի համալսարանում: Ֆակուլտետներին և բաժիններին տրվել է եկամուտների ներգրավման լիարժեք ազատություն, իսկ, օրինակ, գրադարանի և մարզադահլիճների ծախսերը

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

բաշխվել են բուհի տարբեր ստորաբաժանումների (ֆակուլտետների) միջև: Կարծում ենք՝ ապակենտրոնացված ծրագրային բյուջետավորման պարագայում բուհերի բյուջեն պետք է լինի երկմակարդակ: Այսպես՝ պետական ֆինանսավորումը կարող է մուտքագրվել համալսարանի բյուջե, իսկ այլ աղբյուրներից ստացված ֆինանսավորումը՝ ստորաբաժանումների բյուջեներ: Մեկ այլ մոտեցում է կրթական ծառայությունների դիմաց ստացված եկամուտները համալսարանի բյուջեին փոխանցումը՝ գիտական գործունեության դիմաց ստացված վճարները «թողնելով» ստորաբաժանումների (ֆակուլտետներ, քոլեջներ և այլն) բյուջեներում: Ըստ որում, կարևոր է, որ բուհական բյուջեից ստորաբաժանումներին հատկացումներ կատարվեն «հակասոցիալիստական» սկզբունքով՝ ըստ վերջիններիս ներգրավված միջոցների ծավալի: Այլ կերպ ասած, որքան շատ միջոցներ ներգրավի ստորաբաժանումը «դրսի» աղբյուրներից, այդքան առավել շատ ֆինանսավորում կստանա «դաշնային» բյուջեից: Այս մոտեցումը էականորեն կմեծացնի մրցակցությունը բուհի տարբեր ստորաբաժանումների միջև՝ բարելավելով վերջիններիս գործունեության արդյունավետությունը: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ այս մոտեցումը նույնպես զերծ չէ թերություններից, քանի որ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները, ավանդաբար, անհավասարաչափ են բաշխվում ֆակուլտետների միջև: Ընդամին, այլ հավասար պայմաններում, տնտեսագիտության, իրավունքի կամ, օրինակ, բժշկագիտության ֆակուլտետները լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու առավել մեծ հնարավորություն կունենան, քան, ասենք, փիլիսոփայության, աստվածաբանության կամ աշխարհագրության ֆակուլտետները:

Վերջաբանի փոխարեն

Տնտեսագիտության մեջ չկան կամ գրեթե չկան բացարձակ ճշմարտություններ: Հանրային քաղաքականության ոլորտում ամեն մի փոփոխություն կամ բարեփոխում (այս պարագայում ձևակերպումն էական չէ) մի կողմից կարող է դրական լինել, սակայն մյուս կողմից՝ պարունակել որոշակի ռիսկեր: Հենց դա նկատի ունենալով ԱՄՆ-ի նախկին նախագահ Հարի Տրումենը, երբ նշում էր, որ այն ամենը, ինչ պետք է աշխարհին, մեկձեռքանի փոխառված է («մի կողմից ... մյուս կողմից» անգլերենով թարգմանվում է՝ «on one hand ... on the other hand»)¹³: Այս առումով, բացառություն չէ նաև բուհերի եկամուտների աղբյուրների բազմազանեցումը: Սակայն, բուհերի պարագայում եկամուտների բազմազանացում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, քանի որ մեկ կամ երկու հիմնական աղբյուրներից ֆինանսավորմամբ պայմանավորված կայունությունը շատ հաճախ հանգեցնում է արտարկյան մեթոդով նախագծվող կանխադրելի բյուջեների, ինչն էլ սահմանափակում է բարձրագույն ուսումնական հաստատությունների խթանների համակարգը՝ առաջացնելով լճացում: Այս հոդվածի շրջանակներում ուսումնասիրված միջազգային փորձը նույնպես վկայում է, որ եկամուտների աղբյուրների բազմազանեցման արդյունքում օգուտն ավելի է, քան վնասները: Հետևաբար՝ առաջարկում ենք, թեկուզև փորձնական (պիլոտային ծրագրի տարբերակով), կիրառել կանադական մի շարք համալսարաններում հաջողությամբ ներդրված փորձը՝ ներբուհական ստորաբաժանումներին օժտելով ֆինանսական ռեսուրսների հայթայթման լայն լիազորություններով:

¹³ Nelson D. Schwartz "Economists Discuss the Predictions That Divide Them ", August 30, 2016, <https://www.nytimes.com/2016/08/31/business/economy/economists-discuss-the-predictions-that-divide-them.html>